# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ 140-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆԸ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 12 հոկտեմբերի, 2014 թ.)

Սիրեցյալ եղբայր ի Քրիստոս՝ Մորան Մոր Իգնատիոս Եփրեմ Բ.,

Սիրելի հոգևոր հայրեր,

Մեծարգո Նախարար,

Բարձրագույն կրթական հաստատությունների պատվարժան ռեկտորներ, Գևորգյան հոգևոր ճեմարանի հարգարժան դասախոսներ, սիրելի ուսանողներ և ներկաներ.

Ուրախ ենք բոլորս, հոբելյան է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Մեկտեղվել ենք այստեղ՝ տոնախմբելու Գևորգյան հոգևոր ճեմարանի 140-ամյակը:

Մեր ժողովրդի համար նվիրական անուն է Գևորգյան հոգևոր ճեմարանը, նրա առաքելությունը՝ գնահատված, նրա հիմնադիրը և երախտավորները՝ մեծարված: Երանաշնորհ Գևորգ Դ. Հայրապետի մեծ տեսիլքի ծնունդն է ճեմարանը: Հոգու լուսաթռիչ հայացքով Հայրապետը տեսավ բարի հովիվների բույլը, ովքեր անսասան կպահպանեն մեր Եկեղեցին և նրա հովանու ներքո հավաք պահելով՝ աստվածօրինյալ ուղիներում կհովվեն Տիրոջ ժողովրդին: Հայրապետի մտքում հասունանում էր Մայր Աթոռում ժամանակի պահանջները լրացնող ճեմարան հաստատելու համոզումը, որ նրա սրբապաշ պատերը խոյացնեն գիտելիքն ու կրթությունը, և գմբեթը պսակեն Եկեղեցուն ու ազգին անմնացորդ նվիրվելու գաղափարն ու ոգին:

Արդարև, 140 տարվա ընթացքում Գևորգյան հոգևոր ճեմարանը հասակ առավ ու ամրացավ և մշտապես վառ պահեց ուղղափառ հավատքի և ազգային դպրության լույսը, կրթեց նախանձախնդրության ու ծառայասիրության բարեբեր ոգին: Այսօր հպարտ ենք այն ավանդով, որ ճեմարանը Աստծո օրհնությամբ բերել է հոգևոր և ազգային մեր կյանքում: Մեր ժողովրդին ճեմարանը պարգևեց ականավոր գիտնականներ, մշակույթի մեծանուն գործիչներ, երախտարժան հոգևոր առաջնորդներ: Սերունդները հաջորդեցին միմյանց և իրենց անունները դարերին ի պահ տալով՝ անցան մշտնջենություն, իսկ նրանց գործը շարունակվեց, շարունակվում է և կշարունակվի միշտ:

Նայելով փարիների հեռվից՝ տեսնում ենք, որ Գեւորգյան հոգեւոր ճեմարանը, ինչպես նկանակ, բաժանվեց, բաշխվեց, հասավ աշխարհի հեռավոր անկյուններում ապրող մեր ժողովրդի զավակներին, հագեցրեց կարոտյալ հոգիների հոգեւոր ծարավն ու քաղցը, բայց չպակասեց, այլ առավել զորացավ ու պայծառացավ եւ այսօր մեր անկախ պետականության հովանու ներքո շարունակում է լույս տալ մեր ժողովրդի ազատ կյանքի նոր հույսերին: Մենք բոլորս ջանում ենք, որ պայծառ մնա ճեմարանի հոգեւոր անդաստանը, եւ նրա հարկից իրենց քայլերն սկսող մեր զավակները՝ Աստծո խոսքով առաջնորդեն մեր ժողովրդին դեպի աստվածօրհնյալ կյանքի ափեր:

Փառք ենք բարձրացնում առ Աստված, որ Իր առատ շնորհներով օրհնեց հոգեւոր մեր այս տունը, մեր ժողովրդի համար նվիրական, իսկ մեզանից շատերի սրտին հարազատ ճեմարանը, որտեղից սկսվել է մեր հոգեւոր ծառայությունը: Այսօր բազմակի է մեր ուրախությունը, որ տոնին մասնակից է նաեւ Ասորի Եկեղեցու Պետ Մոր Իգնատիոս Եփրեմ Բ. Ամենապատիվ Պատրիարքը: Հոգեւոր մեր եղբոր հետ այս օրերին աղոթեցինք աշխարհի խաղաղության, մեր երկու Եկեղեցիների եղբայրական հարաբերությունների ու համագործակցության, Քրիստոսի Սուրբ Եկեղեցու առաքելության զորացման համար, որին ծառայում է նաեւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանը:

Հոբելյանական տոնի եւ հիշատակի այս երեկո Գեւորգյան ճեմարանի առավել ու առավել պայծառության տեսիլքով աղոթք ենք բարձրացնում կրթության եւ լուսավորության մեծ ջատագով լուսահոգի Գեւորգ Դ. Հայրապետի, ինչպես նաեւ՝ իրենց խնամքով եւ հոգածությամբ, իրենց բոլորաջան փքնությամբ ու աշխատանքով Գեւորգյան ճեմարանի հարկը լուսավոր եւ արգասաբեր պահած բոլոր երախտավորների համար:

Մեր Տիրոջ զորակցությունն ենք հայցում Գեւորգյան հոգեւոր ճեմարանի բարեջան տեսուչ Գեւորգ Սրբազանին եւ նրան աջակից փոխտեսուչներին, վերակացու-դաստիարակներին, ովքեր ուսանողների համար ծնողներ են, եղբայրներ, հոգեւոր խորհրդատուներ: Տիրոջ զորակցությունն ենք հայցում ճեմարանում դասավանդող պատվարժան դասախոս մանկավարժներին, որ ամենայն ջանադրությամբ, մեր Եկեղեցու հոգեւոր հզորության, վաղվա լուսավոր օրվա տեսիլքով մասնակիցն են հոգեւոր սպասավորների պատրաստման գործին: Մաղթում ենք բարի ծառայություն եւ ձեռքբերումներ՝ ի նպաստ ճեմարանի առաքելության առավել ու առավել արդյունավորման:

Սիրելի՛ ճեմարանականներ, առանձնակի շնորհ է հոգեւոր ճեմարանում ուսանելը, որ աստվածադիր հասպատություն է: Ճիշտ է՝ հիմնադիրները եղել են մեզ պես անհատներ, սակայն Աստծո հայտնությունն է գործել նրանց մեջ,

Աստծո ձայնին, կոչին ընդառաջ են նրանք իրականացրել կրթական գործի կազմակերպումը այս հաստատությունում: Ճեմարանի ուսանող լինելը ե՛ւ շնորհ է, ե՛ւ առավել՝ պատասխանատվություն, որ ուսում առնելով ու կրթվելով այստեղ՝ նվիրվեք Տիրոջ Սուրբ Սեղանի սպասավորությանը, ձեր ուսերի վրա կարողանաք վերցնել Տիրոջ բանավոր հոտի հոգեւոր առաջնորդությունը, որպեսզի ձեր ջանքերով, ձեր հավատքով Աստծո կենարար խոսքը եւ փրկության հույսը ուղեկցեն մեր ժողովրդին, եւ մեր Եկեղեցին միշտ լինի Տիրոջ ժողովրդի ապաստանի բարձր բերդամրոց ու պայծառությամբ լի հոգեւոր տաճար:

Մեր աղոթքն է, որ Ողորմած մեր Տերը բարեխոսությամբ Իր մեծ վկաների՝ Ս. Գեւորգ զորավարի, հավատքի մեր հայր Ս. Գրիգոր Լուսավորչի, Ս. Սահակ եւ Ս. Մաշտոց մեր առաջին ուսուցիչների՝ Իր Աջի հովանին պարածյալ պահի ազգիս Մայր Աթոռի հոգեւոր ճեմարանի եւ կրթական հաստատությունների վրա եւ զորացնի բոլորիս մեր պարտք ու պարտականությունների, կոչման ու առաքելության մեջ: Աղոթում ենք, որ Տերը խաղաղ պահի մեր երկիրը եւ համայն մեր ժողովրդին:

Տիրոջ սերը, ողորմությունն ու առատ շնորհները ամենքիս հետ լինեն այժմ եւ հավետ. ամեն: